ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի տնօրեն

Վ. Պետրոսյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ՝ 03Ա088945)

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 15.03.2021թ.),

քննելով «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կարիքների համար պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ. ներկայացված և 05.03.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 04.03.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը,

«Էջմիածին» ջրօգտագործողների կարիքների համար՝ պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում պոմպերի, Էջմիածին ջրօգտագործողների ընկերության կարիքների համար՝ տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են 6 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	Պոմպ ԷՑՎ 12-160-100
2	Պոմպ ԷՑՎ 12-160-65
3	Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ
4	Պոմպ 2 ԷՑՎ 10-160-35Գ
5	Տրանսֆորմատոր ТМ 100/6
6	Մալուխ ՎՊՊ 35

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացուցով 3-րդ չափաբաժնի մասով, որպես գնման առարկա /տեխնիկական բնութագիր/ սահմանվել է հետևյալը՝ ***Նոր խ/պոմպ 3 ԷՑՎ12-255-30Գ:***

Տվյալ Ընթացակարգի մի շարք չափաբաժիններին, այդ թվում նաև 3-րդ չափաբաժնին, մասնակցության հայտ է ներկայացրել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնին՝ Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ ապրանքի մասով, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն:

«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած ապանքի՝ Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Г ապրանքի մասով, ամբողջական նկարագրում բացակայել է արտադրողի անվանումը:

Գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված շտկման արդյունքում «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար որպես արտադրողի անվանում նշվել է ОАО "Завод Пром бурвод":

«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ОАО "Завод Пром бурвод" կատարված հարցմանը ի պատասխան՝ ОАО «Завод Пром бурвод» հայտնել է,որ իր մոտ առկա է հետևյալ մոդելը՝ ЭЦВ 12-255-30: Ավելին, նշված գործարանը հայտնել է, որ..... Нам только не понятно, что обозначает буква Г (նամակի արտատպումը կցվում է):

www. gnumner.am պաշտոնական կայքում հրապարակված չեն «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունները:

Ընթացակարգի գնահատող պայմանագիր կնքելու մասին հայտարարության համաձայն՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է հանդիսանում «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնով՝ «Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ-ն, 3-րդ չափաբաժնով՝ «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն, 4-րդ չափաբաժնով՝ «Անդրանիկ Գասպարյան» ԱՁ-ն, 5-րդ չափաբաժնով՝ «ԷՆԵՐՋԻ-ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն, 6-րդ չափաբաժնով՝ «ԷՆԵՐՋԻ-ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն:

Պայմանագիր կնքելու որոշման մեջ 3-րդ չափաբաժնում որպես մասնակից նշված չեն «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, ինչպես նաև ևս 2 մասնակից, որոնք հայտ են ներկայացրել նշված չափաբաժնով:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները,

Ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն' սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մաանակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնին Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ ապրանքի մասով, մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն:

«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած ապրանքի՝ Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ ապրանքի ամբողջական նկարագրում բացակայել է արտադրողի անվանումը:

Գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված շտկման արդյունքում «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար արտադրողի անվանում նշվել է ОАО "Завод Пром бурвод":

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ОАО "Завод Пром бурвод" կատարված հարցմանը ի պատասխան՝ ОАО "Завод Пром бурвод" հայտնել իր մոտ առկա հետևյալ մոդելը՝ ЭЦВ 12-255-30: Ավելին, նշված գործարանը հայտնել է, որ.... Нам только не понятно, что обозначает буква Г:

Այսպիսով, ОАО "Завод Пром бурвод" պատասխանից ակնհայտ է դառնում, որ նշված գործարանը չի արտադրում տվյալ պարամետրերին համապատասխանող պոմպ: Ընդ որում, Ընթացակարգի հրավերով պահանջվող 3 ԷՑՎ 12-255-30Г պոմպը մի քանի անգամ ավելի հզոր է և համապատասխանաբար թանկ, քան ОАО "Завод Пром бурвод" կողմից արտադրվող ЭЦВ 12-255-30 պոմպը:

Գտնում ենք, որ հիմք ընդունելով շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը նախ այն հիմքով, որ շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես դա պահանջում է Ընթացակարգի հրավերը, և երկրորդը, ОАО "Завод Пром бурвод" չի արտադրում հրավերով պահանջվող և ՍՊԸ-ի կողմից առաջարկված 3 ԷՑՎ 12-255-30Г պոմպը:

Վերոհիշյալով գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով www. gnumner.am համացանցային կայքի ուսումնասիրությունը, ցանկանում ենք փաստել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև Օրենքի վերոհիշյալ դրույթները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի հրապարակվել Ընթացակարգի վերաբերյալ որևէ արձանագրություն:

Դ) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ նկատի ունենալ նաև մի շատ կարևոր փաստ.

www. gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մեջ 3-րդ չափաբաժնում որպես մասնակից նշված չեն «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, ինչպես նաև ևս 2 մասնակից, որոնք հայտ են ներկայցրել նշված չափաբաժնով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները»:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի 04.03.2021թ. ներկայացրած բողոքը, որով վիճարկել էինք «էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար՝ պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները:

Հայտնում ենք, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից կրկնակի ներկայացրած պահանջից հետո, ի վերջո, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացվեցին «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 1.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագրերը:

Նշված ապրանքների նկարագրերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՍՊԸ-ների կողմից առաջարկվել են այնպիսի ապրանքատեսակներ այնպիսի տեխնիկական պարամետրերով, որոնք չեն արտադրվում վերջիններիս կողմից նշված արտադրող գործարանների կողմից, մասնավորապես.

«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ

Հրավերով պահանջվում է 3 ԷՑՎ 12-255-30Գ ունիվերսալ պոմպ

«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից հավելված 1.1 - նկարագրի մեջ առաջարկվող ապրանքի մակնիշ տողում նշվել է ԷՑՎ 12-255-30Գ, նույն աղյուսակում տեխ. բնութագիր տողում նշվել է Q-250մ^3 որը իրենց իսկ կողմից ներկայացված աղյուսակի տողերը հակասում են մեկը մյուսին (պետք է լիներ է Q-255մ3):

2. Ձեզ ենք ներկայացնում Սինխրոն ՍՊԸ-ի կողմից առաջարկված Մոլդովական գործարանի կողմից արտադրվող խորքային պոմպերի ցանկը (նայել http: //hidropompa.md), որում հստակ երևում է, որ գործարանը արտադրում է ԷՑՎ 12-250-30, ոչ թե հրավերով պահանջվող 3ԷՑՎ12-255-30Գ

Հստակ երևում է, որ գործարանը չի արտադրում-

I - 3 ԷՑՎ

II - 255 մ^3

III - Գ

3. Ներկայացվող խ/պ չի համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքին, թե որակային տեսակետով, բնականաբար զիջում է նաև գնով:

Այնուամենայնիվ, նման պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող:

«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ

1. Հրավերով պահանջվում է 3 ԷՑՎ 12-255-30Գ ունիվերսալ պոմպ

«ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1 - նկարագրի մեջ առաջարկվող ապրանքի մակնիշ տողում նշվել է 3 ԷՑՎ 12-255-30Գ

Բողոքով Ձեզ ենք ներկայացրել ОАО "Завод Пром бурвод" կողմից մեր հարցմանը պատասխանաց էլ. նամակը, որում հստակ հիշատակված է, որ գործարանը չի արտադրում 3ԷՑՎ և նույնիսկ չի հասկանում հրավերով պահանջվող պոմպի մակնիշի Գ

տառի նշանակությունը (վերոհիշյալը հստակ երևում է նաև գործարանի էլ. կայքում հրապարակած ապրանքների ցանկից՝ https://promburvod.com/ecv. htm):

2. Ներկայացվող խ/պ չի համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքին, թե որակային տեսակետով, բնականաբար զիջում է գնայինով:

Այնուամենայնիվ, նման պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող:

Գտնում ենք, որ վերոհիշյալով գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում ենք բողոքի նոր պահանջներ և խնդրում սույն բողոքի շրջանակներում քննության առնել սույն լրացմամբ ներկայացրած պահանջները:

Այսպիսով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:20-ին և 26.03.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը՝ միաժամանակ հայտնելով, որ բողոքով վիճարկվում է Ընթացակարգի 3-րդ չափաբաժինը:

<u>2. «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությանն ուղղված 05.03.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/3292-2021/ գրությամբ պահանջ է ներկայացրել բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությունը 16.03.2021թ. թիվ 01-03/101-21 գրությամբ ներկայացրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և մասնակիցների կողմից ներկայացված հայտերի լուսապատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:20-ին և 26.03.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությունը «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտեր ներկայացրած «ՍԻՆԽՐՈՆ» և «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊ ընկերությունների հայտերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ բանակցությունների արդյունքում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. 01.03.2020թ. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու՝ Տեղեկագիր) հրապարակված պայմանագիրը կնքելու որոշման մասին

հայտարարության համաձայն՝ «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և բողոքի լրացումները՝ կից նյութերով, «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից 16.03.2021թ. թիվ 01-03/101-21 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությունը «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար պոմպերի, տրանսֆորմատորի և մալուխի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն բողոքով վիճարկում է Ընթացակարգի միայն 3-րդ չափաբաժնի մասով «ՍԻՆԽՐՈՆ» և «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊ ընկերությունների հայտերը, ուստի սույն բողոքի շրջանակներում անդրադարձ է կատարվում բացառապես Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ՍԻՆԽՐՈՆ» և «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊ ընկերությունների հայտերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության հարցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի տեխնիկական բնութագրում ներկայացված չէ ապրանքների «ապրանքային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը», իսկ «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների բնութագրերը ամբողջական չեն:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և պահանջել ընկերություններից շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.02.2021թ. ընկերություններին Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցել է հայտում արձանագրված հետևյալ անհամապասխանությունները շտկելու վերաբերյալ.

- «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի ապրանքի տեխնիկական բնութագրերը ամբողջական չեն,
- «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի տեխնիկական բնութագրում ներկայացված չէ ապրանքների «ապրանքային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցների մի մասի մոտ արձանագրված տեխնիկական որոշակի անճշտություններ շտկվել են օրենքով սահմանված ժամկետում և ներկայացվել պատվիրատուին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ բանակցությունների արդյունքում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

01.03.2020թ. Տեղեկագրում հրապարակված պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

Այսպիսով՝ Ընթացակարգի 1-ին մասի հրավերի 4-րդ կետի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից ***<u>առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև՝ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը</u>*** (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի՝ «Նոր խ/պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ», տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ տեսքով՝

Հ/հ	Անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Նոր խ/պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ	Մատակարարում ժամում 155-160 մետր խորանարդ Խորությունը՝ 30 մ, ընթացիկ I -93 A Շարժիչի հզորություն 32-35 կՎտ Ընդհանուր չափերը մմ-ով, ոչ ավելի, քան D-281, L-1620, քաշը, կգ, ոչ ավելին - 255 կգ, ջրհորի տրամագիծը, մմ-301 Տեղակայման վայրը՝ Խորոնք N8, Տարոնիկ N3

«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն հայտի 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեսքով՝

Հ/հ	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
3	Խորքային պոմպ	Մոլդովա Հիդրոպոմպա	Նոր խ/պոմպ ԷՑՎ 12-255-30Գ	Մոլդովա Քիշնև	32կվտ Q=250մ^3 H=30մ

«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն հայտի 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեսքով՝

Հ/հ	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
3	Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Գ				Մատակարարում ժամում 155-160 մետր խորանարդ Խորությունը՝ 30 մ, ընթացիկ I -93 A Շարժիչի հզորություն 32-35 կՎտ Ընդհանուր չափերը մմ-ով, ոչ ավելի, քան D-281, L-1620, քաշը, կգ, ոչ ավելին - 255 կգ

Վերոհիշյալ ընկերությունները Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ. Մասնավորապես՝

- «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի մասով նշվել է, որ ապրանքի տեխնիկական բնութագրերը ամբողջական չեն:
- «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի մասով նշվել է, որ տեխնիկական բնութագրում ներկայացված չէ ապրանքների «ապրանքային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը»:

Ընկերությունների կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել են հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակները՝ հետևյալ տեսքով՝

«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ը՝

Հ/հ	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
3	Խորքային պոմպ	Մոլդովա Հիդրոպոմպա	Նոր խ/պոմպ ԷՑՎ 12-255-	Մոլդովա Քիշնև	Արտադրողականությունը՝ Q=255մ³

			30Г		Ճնշումը՝ H=35մ Շարժիչի հզորությունը՝ 32կՎտ Ծախսվող հոսանքը՝ Iном=66А Պոմպի տրամագիծը՝ D=281մմ Երկարությունը՝ l=1430մմ Քաշը՝ 240կգ

<u>«ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ը՝</u>

Հ/հ	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
3	Պոմպ 3 ԷՑՎ 12-255-30Г	3ЭЦВ 12-255-30Г	3ЭЦВ 12-255-30Г	«ОАО» «Завод Пром бурворд»	Մատակարարում ժամում 155-160 մետր խորանարդ Խորությունը՝ 30 մ, ընթացիկ I -93 A Շարժիչի հզորություն 32-35 կՎտ Ընդհանուր չափերը մմ-ով, ոչ ավելի, քան D-281, L-1620, քաշը, կգ, ոչ ավելին - 255 կգ

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ բանակցությունների արդյունքում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

01.03.2020թ. Տեղեկագրում հրապարակված պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված շտկման արդյունքում «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար արտադրողի անվանում նշվել է ОАО "Завод Пром бурвод":

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ОАО "Завод Пром бурвод" կատարված հարցմանը ի պատասխան՝ ОАО "Завод Пром бурвод" հայտնել է, որ իր մոտ առկա է հետևյալ մոդելը՝ ЭЦВ 12-255-30: Ավելին, նշված գործարանը հայտնել է, որ.... Нам только не понятно, что обозначает буква Г:

Այսպիսով, ОАО "Завод Пром бурвод" պատասխանից ակնհայտ է դառնում, որ նշված գործարանը չի արտադրում տվյալ պարամետրերին համապատասխանող պոմպ: Ընդ որում, Ընթացակարգի հրավերով պահանջվող 3 ԷՑՎ 12-255-30Г պոմպը մի քանի անգամ ավելի հզոր է և համապատասխանաբար թանկ, քան ОАО "Завод Пром бурвод" կողմից արտադրվող ЭЦВ 12-255-30 պոմպը»:

Բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանավորված, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 26.03.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/4556-2021 գրությամբ դիմել է ОАО "Завод Пром бурвод"-ին՝ խնդրելով հայտնել՝ ОАО "Завод Пром бурвод"-ի կողմից 3 ԷՑՎ 12-255-30Г պոմպը արտադրվում է, թե՞ ոչ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ***ОАО "Завод Пром бурвод"-ը 29.03.2021թ. թիվ 23-04/272 գրությամբ հայտնել է, որ <u>ОАО "Завод Пром бурвод"-ը 3 ԷՑՎ 12-255-30Г պոմպ չի արտադրում</u>***:

Ուսումնասիրելով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված հիմքերը, «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պահանջվող գնման առարկայի պոմպի տեխնիկական բնութագիրը և այն համադրելով «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հետ, ինչպես նաև հիմք ընդունելով ОАО "Завод Пром бурвод"-ի գրությունը՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի 01.03.2020թ. Տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը, քանի որ վերջինիս կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի՝ 3 ԷՑՎ 12-255-30Г պոմպի համար արտադրողի անվանում նշվել է ОАО "Завод Пром бурвод", մինչդեռ ОАО "Завод Пром бурвод" կատարված հարցմամբ պարզվել է, որ ОАО "Завод Пром бурвод"-ը չի արտադրում հրավերով պահանջվող և «ԲԱՅԱՋ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 3 ԷՑՎ 12-255-30Г

պոմպը, հետևաբար արձանագրում եմ, որ «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

Միաժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» և «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊ ընկերություններից բացի հայտ են ներկայացրել «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, ինչպես նաև երեք այլ մասնակիցներ, որոնց վերաբերյալ Տեղեկագրում 01.03.2020թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման մեջ 3-րդ չափաբաժնով տեղեկատվություն առկա չէ:

Ինչ վերաբերում է «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը, պետք է մերժեր վերջինիս հայտը նաև այն հիմքով, որ շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես դա պահանջում է Ընթացակարգի հրավերը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության նման դիտարկումն անհիմն է, քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.17-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

<u>Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:</u>

Հետևաբար «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ չստորագրելը իրավաչափ է:

Անդրադառնալով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկվող Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի հայտի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության հարցին՝ արձանագրում եմ հետևյալը.

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Ապրանքի նկարագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է այնպիսի ապրանքատեսակ այնպիսի տեխնիկական պարամետրերով, որը չի արտադրվում վերջինիս կողմից նշված արտադրող գործարանի կողմից, մասնավորապես.

Հրավերով պահանջվում է 3 ԷՑՎ 12-255-30Գ ունիվերսալ պոմպ

«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից հավելված 1.1 - նկարագրի մեջ առաջարկվող ապրանքի մակնիշ տողում նշվել է ԷՑՎ 12-255-30Գ, նույն աղյուսակում տեխ. բնութագիր տողում նշվել է Q-250մ^3 որը իրենց իսկ կողմից ներկայացված աղյուսակի տողերը հակասում են մեկը մյուսին (պետք է լիներ է Q-255մ3):

Ձեզ ենք ներկայացնում «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Մոլդովական գործարանի կողմից արտադրվող խորքային պոմպերի ցանկը, որից հստակ երևում է, որ գործարանը արտադրում է ԷՑՎ 12-250-30, ոչ թե հրավերով պահանջվող 3ԷՑՎ12-255-30Գ

Հստակ երևում է, որ գործարանը չի արտադրում- I - 3 ԷՑՎ, II - 255 մ3, III – Գ»:

Այս տեսանկյունից, ուսումնասիրելով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված հիմքերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասով, «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պահանջվող գնման առարկայի՝ պոմպի տեխնիկական բնութագիրը և այն համադրելով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտով, այնուհետև շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հետ, արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի հրավերով 3-րդ չափաբաժնի մասով պահանջվում է «Նոր խ/պոմպ **3** ԷՑՎ 12-255-30Գ պոմպ», իսկ «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 3-րդ չափաբաժնի մասով «Մակնիշը» սյունակում նշվել է «Նոր խ/պոմպ ԷՑՎ 12-255-30Գ պոմպ»:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում <u>մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Մինչդեռ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել և նույն հիմքով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն ծանուցվել է միայն ապրանքի տեխնիկական բնութագրերի ամբողջական չլինելու մասով, այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մակնիշը» սյունակում առկա անհամապատասխանություն չի արձանագրվել և չի տրվել շտկման, ուստի գտնում եմ, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ ապրանքի նկարագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է այնպիսի ապրանքատեսակ այնպիսի տեխնիկական պարամետրերով, <u>որը չի արտադրվում վերջինիս կողմից նշված արտադրող գործարանի կողմից</u>*, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ինչպես հայտով, այնպես էլ շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի «Արտադրողի անվանումը» սյունակում նշվել է Մոլդովա, Քիշնև, այսինքն՝ վերջինիս կողմից նշվել է ոչ թե Ընթացակարգի հրավերով պահանջվող «Արտադրողի անվանումը», այլ՝ արտադրող երկիրը, ուստի արտադրողի անվանման բացակայության պայմաններում հնարավոր չէ արձանագրել բողոքով բարձրացված խնդրի իրավաչափությունը:

Սույն մասով ևս արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն չի արձանագրվել:

Մինչդեռ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է</u>*** իր կողմից

առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և ***արտադրողի անվանումը*** (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերը նշված հիմքերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի 10.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ արձանագրի և ծանուցի վերջինիս՝ մանրամասն նկարագրելով «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ առկա անհամապատասխանությունները:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով ընդունել որոշում՝

1. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը,

2. դադարեցնել «ԲԱՅԱԶ ԷՆԵՐԳՈՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը,

3. դադարեցնել «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**